ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13-ը մայիսի 2021թ.
Ժամը 10^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան, (ԳԱՊ)

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,

ՀՀ ՊՆ գործերի կառավարչության զինանշանագրային բաժնի պետի ՊԺԿ Ա. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ գործերի կառավարչության վերլուծության և պլանավորման բաժնի ավագ մասնագետ Ա. Բարսեղյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի պետ Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ -ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Դրոշների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	<ՄԱՐ-ՄԱԴԷԼ> ՍՊԸ
2	<Ալեքսանդր-Մ> ՍՊԸ
3	<Շուշան Տեխնիկա> ՍՊԸ
4	<ՎԱՆԵ> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ -ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ

յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 <ՄԱՐ-ՄԱԴԷԼ> ՍՊԸ-ի, <Ալեքսանդր-Մ> ՍՊԸ-ի և <Շուշան Տեխնիկս> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

<ՎԱՆԵ> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություն, մասնավորապես՝ <ՎԱՆԵ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ում նշված չէ, թե <ՎԱՆԵ> ՍՊԸ-ն որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 13.05.2021թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցել <ՎԱՆԵ> ՍՊԸ-ին անհամապատասխանության շտկման վերաբերյալ, որը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը և 14.05.2021թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Դրոշներ /Զորամասի մարտական դրոշ/	հատ	5	1 000 000	<ՄԱՐ-ՄԱԴԷԼ> ՍՊԸ	810 000	810 000	<ՄԱՐ-ՄԱԴԷԼ> ՍՊԸ	810 000	810 000
								<Ալեքսանդր-Մ> ՍՊԸ	895 000	895 000
								<Շուշան Տեխնիկս> ՍՊԸ	1 150 000	1 150 000
								<ՎԱՆԵ> ՍՊԸ	1 900 000	1 900 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 25.05.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել <ՄԱՐ-ՄԱԴԷԼ> ՍՊԸ -ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Գրիգորյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Ա. Բարսեղյան

Գնահատող Ա. Բարսեղյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան